


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՊԵՆՏԵԿՈՍՏԻԻ ՈՅԺԸ**

Յիսուս համբառնալէ առաջ իր աշակերտներուն խոստացաւ որ անոնց ոյժ պիտի զրկէ եւ պատուիրեց որ իր անունով որեւէ զործի չձեռնարկեն, միւշեւ որ այդ ոյժը չստանան: Այդ ոյժը եկաւ, մեծ զօրութիւնով յայտնուեցաւ աշակերտներուն եւ տունը լեցուց: Անոր յայտնութեան արտաքին երեւոյթներն էին հովի ձայն, կրակէ լեզուներ, զանազան բառեր արներ խօսիլ: Բայց բուն ոյժը այս բաները չէր: Այս ոյժը մասնաւոր առումով նոր էր աշխարհիս վրայ: Այդ ժամանակէն սկսեալ այս ոյժն է որ կը զործէ Եկեղեցիի մէջ, եւ կը նուաճէ ազգերն ու լեզուները:

Ուրիշ ոյժեր ալ կան որոնք կը ծառային մարդկութեան, զանոնք ուրանալով Քրիստոնէութեան ոյժին արժէքը չենք աւելցներ:

1. Բաղաձայնային ոյժ: Աշակերտները եւ բոլոր Քրիստոնեաները քաղաքական ոյժ կ'աւելնէին. զայն ստացան: Եկեղեցին ուրախացաւ որ Թագաւորներ, բանակներ, ազգեր Քրիստոնեայ եղան: Եթէ Եկեղեցին իր ունեցած քաղաքական ոյժը չարաչար չէր գործածեր աւելի օգտակար պիտի ըլլար:

2. Մտաւորական ոյժ: Եկեղեցին մեծ մշտաւորական ոյժ ունի: Յիսուս ըսաւ. «Եւ աշխարհի լոյսն եմ»: Աւետարանը միտքը լուսաւորեց: Աշխարհ Քրիստոնէութեան կը

կը պարտի իր վայելած մեծագոյն ճշմարտութիւնները, որոնք արժանի են լուրջ ուսումնասիրութեան առարկայ ըլլալ: Քրիստոնէութիւնը հասարակ մարդերու միջոցաւ նկատւարածուիլ. բայց այսօր մարդկային միտքը վարող ոյժն է ան:

3. Հրաշխ ոյժն ալ ուշագրութիւն գրաւած է: Քրիստոսէ առաջ այս ոյժը կար աշխարհիս մէջ: Յիսուս հրաշագործութեան կարողութիւն չնորհեց իր աշակերտներուն: Պենտէկոստէի օրը մարդիկ զարմացան այս ոյժին արտայայտութեան վրայ: Բայց Քրիստոնէութեան մեծագոյն ոյժը հրաշագործութեան մէջ չը յայտնուեցաւ: Մարդիկ միշտ փորձուած են անոր գոյութիւնը անարժան աղբիւրներու վերագրել: Միշտ գտնուած են մարդիկ որոնք խորհած են՝ թէ Քրիստոս եւ Քրիստոնեաներ չար ոգիներու իշխանին ոյժովը ոգիներ կը հանեն:

Քրիստոս իր աշակերտներուն տուած էր նաեւ եկեղեցական կարգ մը իրաւասութիւններ, որոնցմէ են Սուրբ Խորհուրդներ կատարել, եկեղեցիներ կազմակերպել եւայլն: Ս. Հովհիմ զալուստովը՝ ասոնցմէ զատ լեզուներ խօսելու, ժողովուրդներուն սորվեցնելու, եւ անոնց հոգեւոր սնունդ տալու ոյժն ալ ստացան:

Բայց այն ոյժը՝ որ Քրիստոնէութեան միջոցաւ աշխարհ մտաւ եւ մասնաւոր կերպով եւ ոյժով Պենտէկոստէի օրը յայտնուեցաւ

անձնական, կրօնական և քաղաքական ոյժն էր: Այս ոյժը բազմազան կերպերով իր բարերար ազդեցութիւնովը գործած է կեանքին վրայ: Շատ մը անգթութիւնները եւ բարբարոսութիւնները նուազեցուցած, գերիները ազատած է, ինկածները վերցուցած, միջանհատական եւ միջազգային յարաբերութիւններու համար արդարութեան գիտին մը ապահոված է: Այս ոյժը լաւ գործ տեսած եւ իր գոյութիւնը աշխարհիս մէջ անհրաժեշտ դարձուցած է, հակառակ տնոր որ շատ մը արեւելքներու եւ իր բարեկամներուն դժուարութիւններուն պատճառաւ շատ ոյժ եւ ազդեցութիւն կորսնցուցած է: Աշխարհը ներկայիս Քրիստոսի չի զիմեր եւ զԱյն կարեւոր իսկ չի նկատեր ըսել պարզապէս դարուս ոգին եւ մարդկութիւնը անպատուել է: Ի. դարն է որ ամենէն աւելի հոգեւոր ոյժերը կը գնահատէ: Ըն անկեղծ սիրտերը եւ է՛ն խորաթափանց միտքերը լոյսի համար Քրիստոսի կը զիմեն: Աշխարհ իր լաւագոյն յոյսը Քրիստոնէութեան պարզ ճշմարտութեան մէջ գտնելու սկսած է:

Պենտէկոստէի ոյժն է մեծագոյն ազդակը որ անհատներու եւ ազգերու մէջ խաղաղութիւն եւ արդարութիւն կը հաստատէ:

Հոգեւոր ոյժը կ'զգացուի բայց չի կրնար բացատրուիլ: Երբ մարդ այս ոյժը ունենայ իր զործունէութեան բոլոր չըջանականները անկէ կ'ազդուին: Թէ՛ հոգեւորները եւ Թէ՛ աշխարհականները կը վայելեն այս ոյժը, որ Քրիստոսի գալուստէն ի վեր աշխարհիս մէջ յայտնի կերպով կը գործէ: Նոյն իսկ անոր ներկայութիւնը չ'զգացուի միայն այն ատեն երբ մէկը անուանապէս հոգեւոր է: Այս ոյժին ազդելը եւ ոյժը ինքը Ս. Հոգին է: Աշակերտները՝ որոնք Յիսուսի ընկերացիներ էին ականատես ըլլալով Անոր գործունէութեան, խաչելութեան, յարութեան եւ համարձուամբն, պատուէր առած էին զործի չսկսիլ մինչեւ որ չլեցուին Ս. Հոգիով:

Բանակ մը թշնամիի բերդ մը գրաւելու համար պայն պաշարած է. թնդանօթները վառօդով եւ ռումբերով լեցուած պատրաստ են ռմբակոծելու. բայց չարժամ մը չկայ. կայծ մը պէտք է վառօդը բռնկեցնելու համար: Այս կրակը Ս. Հոգին ինքն է:

Անոնք որ հաւատքով եւ անկեղծութեամբ

կ'աղօթեն այս ոյժը կ'ստանան: Եկեղեցին պէտք է ակնդէտ սպասէ Ս. Հոգիի գալուստին. քանզի խոստումը վստահելի է:

Ի՞նչ է այս ոյժին ծառայութիւնը մեր անհատական, եկեղեցական, ընկերային կեանքին մէջ: Ի՞նչու պէտք է սպասենք Ս. Հոգիի գալուստին: Քրիստոսի գլխաւոր նշանաւոր այս ոյժը զրկելու մէջ սա է, — վրկայութիւն: Աշակերտները Ս. Հոգիի գալուստին պէտք էին սպասել Յիսուսի մասին վկայելու համար: Բոլոր Քրիստոնեաները վկաներ ըլլալու կոչուած են. մեր բոլոր գործերուն մէջ այս շատ կարեւոր տեղ մը պէտք է գրաւէ:

Մեծ պէտք մը կայ վկայութեան: Մեր ներկայ ողորմելի վիճակին մէջ խորհողներ կան թէ արտօնեալ ենք շատ բաներ ընել, որոնք երբէք չեն վայելի մեր կրօնքին: Մեր վիճակին մէջ գտնուող անհատներէն ասկէ աւելի բարձր բարոյական եւ հոգեւոր կեանք չենք կրնար սպասել: Ասոր ճիշդ հակառակը եղող կեանք մը պէտք է ցուցնենք: Պէտք է ցուցնենք որ տառապանքներու մէջ ալ կարելի է հաւատարիմ մնալ քրիստոնէական սկզբունքներուն: Երբեմն կ'ըսուի թէ Քրիստոնէութիւնը ա'լ անզոր է մեզի պէսներուն օգնելու համար: Մենք պէտք է ճիշդ ասոր հակառակը ցուցնենք՝ նեղութիւններու մէջ իսկ ժպտուն եւ գոհ սրտով հաւատարիմ մնալով Քրիստոսի սիրոյն:

Իբր անհատ եւ իբր համայնք Պենտէկոստէի այս ոյժին պէտք ունինք Քրիստոսի տառապանքները բաժնելու համար, ո'չ միայն առեւտրական ալ նաեւ առեւտրանքական ըլլալու համար, Քրիստոսի աւետարանը քաջօրէն եւ հաւատքով քարոզելու համար: Պենտէկոստէի ոյժին պէտք ունինք ազատուելու համար եկեղեցիներու մէջ գտնուող հոգեւոր պաղութենէն եւ թուլութենէն: Ս. Հոգիին հեղեղաման հոսումովն է որ եկեղեցին պիտի մաքրուի իր անմերձանալի վէճերէն եւ ինկածութիւններէն: Եկեղեցիի պատմութեան մէջ ասկէ աւելի պարզ վկայութիւն մը չկայ: Ուստի ամէն եկեղեցի, ամէն մէկ անդամ, քարոզիչէն սկսեալ մինչեւ ժամկոչը, պէտք է ճամբան պատրաստին այս Պենտէկոստէի ոյժին իջնալուն համար:

Կ. Յ. Յ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԴԵՂԱՐՈՒԵՍՏ

Գ.

«Ո՞ր վարպետը կրցած է երբէք կատարելապէս զոհանցուցիչ կերպով նկարել Քրիստոսի դէմքը», ինչպէս որ կ'ըսէր Վան Տայք: Լէոն Պօնա, արդի իրապաշտ Թրանսայի վարպետը, գիտէ մը առաւ, խաչի մը վրայ կախեց զայն եւ ապա սկսաւ նկարել «Սաչելուծիւնը»: Ղարմանալի չէ որ ան ձախողեցաւ յաջող գործ մը արտադրել: Առնուազն որոշ չափով կարեկից երեւակայութիւն մը անհրաժեշտ է այսպիսի երկի մը համար:

Տր. Փիպատի գիտել տուած է որ «չափքիչ բացառութիւններով, մեծ վարպետներու Քրիստոսը Վշտակիր Մարդն է:» Մէկը կըլնայ իրաւամբ հարցնել թէ այս բոլորին մէջ սխալ ներկայացում մը կամ առնուազն չափազանցութիւն մը չկա՞յ: Կ'ըսուի թէ Յիսուսը իբր «տառապող ծառայ», մարդիքէն արհամարհուած եւ մերժուած ներկայացնել՝ պատճառ եղած է՝ որ Անոր պատմութեան երեւոյթներուն արտակարգ հետաքրքրութիւն ընծայուի: Բընան, զոր օրինակ, Յիսուսի ազգեցութեան կը վերագրէ այն՝ թէ «ինքը աստուածային կեանքի տեսիլքովը յափըշտակուած է եւ հաճոյքով ինքզինքը նուիրած զայն արտայայտելու համար:» Մինչդեռ Ջանկուիլ զԱյն կը նկարագրէ իբր «ոչ թէ չարչարուած Աստուածը այլ իբր զուարթ ընկերը... սիրահարը վաւճառուն կնանքի, տաք արեւի եւ այն ամենուն որ պարզ է, թարմ է, մաքուր եւ գեղեցիկ է:» Այս պարագային, անշուշտ պէտք է ընդունուի որ Քաթաքոմպոնիկոս ուրախ պատանի հովիւը աւելի հաւատարիմ կերպով կը ներկայացնէ Յիսուսը՝ քան Վերադարձումի Քրիստոսի ողբերգական վըսեմ պատկերները:

Բայց կասկածելի կրնայ նկատուիլ թէ այս հակասական երեւոյթը իրական կրնայ ըլլալ: Ինչո՞ւ երկու տեսակէտներն ալ էապէս ճշմարիտ եւ իրարու լրացուցիչները չըլլան: Յիսուսը իբր «տառապող ծառայ» ներկայացնելու զօրաւոր միտումին դէմ ընդդգուսմը կրնայ վերագրուիլ այն զղացումին դէմ՝ թէ

Քրիստոսի կեանքը խտաբարոյ անձնութեան արդիւնքը նկատելու աւանդական գաղափարը հակառակ է գեղեցկութիւնը զընահատելու ոգիին եւ կեանքի ուրախութեան: Իրականութեան մէջ այս ճիշդ չէ: Ասկէ առաջ Ափրիկէի մէջ գործող միսիօնար մը կը գրէր թէ իբր մարդ մը տեսարանները զնահատելու կ'սկսի այս կը նշանակէ թէ միւրջանքերը ալ արդիւնք տալու վրայ են: Կ'արժէ յիշել նաեւ թէ ամենահին ծառայող գաղտնակարը, որ Վան էյք եղբայրներու կողմէ 1432 ին գծուած է Կէնդի Ս. Պափօն Մայր Եկեղեցիին խորանը, կը պատկանի այս շրջանին երբ մարդերուն աչքերը գլխաւորապէս ուղղուած էին «Վշտակիր մարդուն»: Ասկէ չե՞նք կըլնար հետեւցնել թէ Յիսուսի փրկարար շնորհքին վերստին գտնուած գաղափարովը աշխարհիս գեղեցկութիւնը զնահատելու համար նոր զգացում մը յառաջ եկաւ: Թէրեւ «Անոր վերքերովը բժշկուեցանք» խորհմտաւ խօսքին բուն մեկնութիւնը այս է: «Միջնագարեան Կեղարուեստը», կ'ըսէ Սըր Ուայք Պայլիս, «իր առաջին պայծառութեան մէջ այն արուեստն էր որ Քրիստոսի աստուածային նկարագիրին եւ անձին հետ չփում ունենալով ձեւափոխուած էր:» Զ. դարուն մէջ էր որ քրիստոնէական գեղարուեստը համարձակեցաւ Սաչելուծիւնը գծելու, երբ արդէն մօթ հազարամեայ շրջանը սկսած էր եւ փորձը ապարդիւն մնաց: Վերադարձումի շրջանին մարդիկ Մարդու Որդիին նշանակութիւնը աւելի խոր եւ աւելի կատարեալ հասկեցան:

Այդ շրջանին մեծ զիւարէ ապահովարար այս եղաւ, թէ տառապանքը փրկութեան գինն է, թէ «Առանց արիւն թափելու մեղքերու թողութիւն չկայ,» եւ ուրիշ ուեէ արժեքաւոր բան չկայ: Վշտակիր Մարդը ճշմարիտ ուրախութեան հեղինակը եղաւ:

«Յիսուս է այն միակ կեդրոնական դէմքը, որուն աստուածային գեղեցկութիւնը պայծառացնելու նուիրուեցաւ յաւէտ Կեղարուեստը:»

(Թարգմ.)

Տ. Ծ. Խ.

(Շարունակելի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԻՈՑ ՀԱՅ ԱՒԵՑԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ-
ՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՏՍՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ

[Շարունակութիւն և վերջ]

Ժողովը իր կազմակերպական աշխատանքները կատարելէ և եկեղեցիներու տեղեկագրութիւնները լսելէ վերջ ներկուշարթի օրը, Ապրիլ 16ին, սկսաւ զբաղիլ իր օրակարգին վրայ եղող խնդիրներովը: Խորհըր-դակցութեան ընդհանուր նիւթն էր «Աւետարանական Շարժում, Անոր Սկզբունքները և Սրա յայտնութեան Զեւերը», որ չորս մասերու լսածնուած և չորս անձերու կողմանէ մասնաւորապէս ուսումնասիրուած և պատ-րաստուած ժողովին ներկայացուցաւ:

1. «Եկեղեցիի անդամակցութիւն», Տր. Ճ. Ի. Մէրիլի կողմանէ Ապրիլ 16ին:

2. «Հոգեւոր կեանք և մտաւորական հար-ցեր», Վեր. Տ. Անդրէասիանի կողմանէ, Ապ-րիլ 17ին:

3. «Քրիստոնէական վարք ու բարք», Տօքթ. Ա. Յ. Ճէպէճեանի կողմանէ, Ապրիլ 19ին:

4. «Եկեղեցիի ընկերային գործունէութիւնը», Պատ. Ե. Կէօքէօղլեանի կողմանէ, Ապրիլ 18ին:

Մնացեալ ժամանակներու մէջ զանազան մասնախումբերու տեղեկագրութիւնները խորհրդակցութեան նիւթ դարձան և որոշումներ տրուեցան: Դիտելի պարագայ մըն էր որ ժողովուրդէն մեծ թիւով հետաքրքիր-ներ համերոութեամբ և ուշադրութեամբ կը հետեւէին խորհրդակցութեանց:

Եկեղեցիներու տեղեկագրութիւնները ուսումնասիրող մասնախումբը իր յանձնարա-րութիւնները, որոնք ընդունելութեան արժանացան, ներկայացուց հետեւեալ կեր-պով. —

1. Փափաքելի է որ եկեղեցիները իրենց յաջողութիւններուն հետ միասին գծուարու-թիւններուն մասին ալ գրեն:

2. Կարգ մը եկեղեցիներու մէջ անդամ-ները գործի մղելու յաջող ջիւղներ ընդհան-րացնել:

3. Մի քանի եկեղեցիներու մէջ սար-քուած ընկերային և գաղափարական հաւա-քայթներն ալ ընդհանրացնել:

4. Շատ քաջալերելի է եկեղեցիներու մէջ տեսնուած անդամատուրքը աւելցնելու միտումը:

5. Զերմօրէն յանձնարարելի է որ եկե-ղեցիները աւետարանիչներ զրկեն քարոզիչ-ներէ զուրկ բեմերուն և ժողովուրդներուն:

«Նոր Աւետարեք»-ի տեղեկագրութիւնը ուսումնասիրող մասնախումբին յանձնարա-րութիւնները երկար խորհրդակցութեան ա-ռարկայ դարձան: Բոլոր ժողովականները ջերմ վերաբերում ցոյց տալով ամէն կերպով աջակցելու պատրաստակամութիւն ցոյց տը-ւին: Որոշուեցաւ առայժմ պզտիկ փոփո-խութեամբ մը թերթին ներկայ ծաւալը և ձե-ւը պահել, բայց դիտելի էր որ զօրաւոր հո-սանք մը կար թերթին ծաւալը մեծցնելու, որուն կը բաղձայ նաև թերթին վարչական մարմինը:

Շատ քաջալերական էր տեսնել թէ եկե-ղեցիներու մէջ ներքին աւետարանչութեան հանդէպ հետաքրքրութիւնը կ'աւելնար: Ո-րոշուեցաւ ասկէ վերջ այս նպատակով տեղա-կան եկեղեցիներուն տուած դրամին բոլորը որոշ նպատակի մը համար որոշ տեղի մը յատ-կացնել, որպէսզի դրամը աւելի օգտակար կերպով ծախսուած ըլլայ:

Ուշագրաւ երևոյթ մըն է Ե. Ք. Զանից ընկերութիւններուն գործունէութիւնը, ո-րոնց թիւը միշտ կը շատնայ: Շատ փափա-քելի էր որ Սուրբոյ և Լիբանանի Հայ Աւետ. Եկեղեցիներուն բոլոր Զանից ընկերութիւն-ները միութիւն մը կազմէին: (Հալէպի ութը Զանից ընկերութիւնները տեղական միութիւն մը կազմած են, ղեկավարութեամբ Պատ. Ա. Հատիտեանի): Հալէպի Ե. Ք. Զանից ըն-կերութիւններու տեղական միութեան կողմէ առաջարկ մը ներկայացուցաւ ժողովին, խնդրելով որ բոլոր Սուրբոյ և Լիբանանի հա-մար ընդհանուր շրջիկ քարտուղար մը ընտ-րուի, պէտք եղած տեղեր նոր ընկերութիւն-ներ կազմակերպելու, հիւները զօրացնելու, բոլորը իրարու կապելու համար: Այս առա-ջարկը ջերմ ընդունելութեան արժանացաւ և անմիջական կարգադրութիւնները կատարե-լու համար Հալէպի շրջանակին գործադիր մարմինն յանձնուեցաւ խնդրել:

Եկեղեցական յարմար սեփական շէնքե-րէ զուրկ համայնքներ կան, որոնցմէ Դամաս-

կոտինը անհրաժեշտ պէտքը կ'զգայ այդպիսի շէնքի մը: Յիշեալ եկեղեցիին կողմանէ վեր. Ն. Սարեան առաջարկ մը ներկայացուց ժողովին, խնդրելով որ միութիւնը իր կարելի ըլլալով միջոցներովը օգնէ Դամասկոսի եկեղեցիին՝ իր սեփական շէնքը ունենալու համար: Ժողովն յոյժ գնահատելով Դամասկոսի եկեղեցիին այս նպատակով յանձն առած մեծ զոհողութիւնները՝ միաձայնութեամբ որոշեց ամէն կերպով աջակցիլ անոր իր այս ձեռնարկը յաջողցնելու համար:

Մանուկներու եւ պատանիներու կրօնական դաստիարակութիւնը աննկատ չթողուեցաւ այս ժողովին մէջ: Միութեան բոլոր եկեղեցիներուն մէջ Կիրակնօրեայ Դպրոցներուն զարկ տալու եւ անոնց միջոցաւ նոր սերունդին առողջ կրօնական ուսում մատակարարելու գործին հսկելու համար՝ անցեալ տարուան մարտիտեմբը վերահաստատուեցաւ իր պաշտօնին մէջ, երկու նոր անդամներու յաւելումով:

Ուրախութեամբ կ'արձանագրենք հոս թէ Այնթապի նախկին Կ. Թ. Դոլէճը, որ հիմա Հալէպի Դոլէճը կը կոչուի, եւ որուն վարչական մարմինը առ այժմ Հայ Բող. Մանչերու Բարձրագոյն Վարժարանը կը վարէ, յետ այսու բացարձակապէս Միութեան մէկ հաստատութիւնը եղած է:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՊԱՍԼՊԵՔԻ ՄԵՋ

Ուսանողներու ժողովէն անմիջապէս վերջ տեղի ունեցաւ ուսանողներու ժողովը, զոր այսպէս կը տեղեկագրէ Մր. Տ. Ծիւլիըս, Հալէպի Աւետ. Բարձրագոյն Վարժարանի Անգլիերէնի ուսուցիչը:

Սուրբիոյ 15 դպրոցներէն 85 պատուիրակներ իններորդ ուսանողական ժողովին մասնակցեցան, շնչելով բնական եւ բարոյական մաքուր մթնոլորտի մը մէջ: Ժողովը տեղի հինգ օր, Ապրիլ 4-9: Առաջին օրը անցաւ ժողովին ծրագրին մասին նոր տեղեկութիւններ քաղելով: Խորհրդակցութեան ընդհանուր նիւթն էր «Մեծ Յանդուզն Ձեռնարկին համար Պատրաստութիւն»: Պէյրութի Ամերիկեան Համալսարանին բժշկական փրօֆէսորներէն Տօքթ. Էյվլըրի խօսեցաւ թէ ինչպէս պէտք է ֆիզիկապէս պատրաստուիլ այդ Մեծ Յանդուզն Ձեռնարկին համար: Երկրորդ

օրը նոյն հաստատութենէն Տօքթ. Նօրման Լացատրեց թէ ինչպէս պէտք է մտաւորապէս պատրաստուիլ նոյն նպատակին համար: Յաջորդ օրը փրօֆ. Նիքըլի պարզ կերպով յայտնեց թէ մեր ֆիզիկական եւ մտաւորական պատրաստութիւնները մեզի յաջողութիւն չեն խոստանար՝ եթէ մենք չենք գիտեր մարդերու հետ վարուելու կերպը: Յիսուս միշտ մեզի ներկայացուցաւ իբր յանդուգն ձեռնարկողի մը է՛ն կատարեալ մէկ օրինակը, որուն յաջողութիւնը ամէն տեսակ մարդերու հետ քաղձրութեամբ եւ անկեղծօրէն վարուելուն արդիւնքն էր: Զատիկի առաւօտուն Տր. Ծ. Մէրիլ խօսեցաւ Զատիկի նշանակութեան վրայ եւ ցուցուց թէ ինչպէս Յիսուս, Հրեայ յանդուգն ձեռնարկող մը, մարդուն աստուածային փափաքներուն գոհացում տուաւ: Խօսողը յայտնեց թէ նիւթական աշխարհին մէջ կարգ մը տիեզերական օրէնքներ կան, զորոնք պէտք են նկատի առնել եթէ կուզենք յաջողիլ: Նմանապէս հոգեւոր աշխարհի մէջ տիեզերական օրէնքներ կան, որոնցմէ թէրեւս մեծագոյնն է ճշմարտութիւնը ընդունելու եւ անոր հնազանդելու տրամադիր ըլլալ:

Կը խորհիմ թէ պատուիրակներէն շատերը մեծապէս ազդուեցան սա յայտնութեամբ որ անոնք հասարակաց շահեր եւ հարցիւր ունին: Անոնք տեսան թէ իրենց պատկանած դպրոցներուն ընկերային, մարմնամարզական, ուսումնական եւ կրօնական ծրագիրները իրարու շատ կը նմանին, թէ իրենց փափաքներէն եւ ձգտումներէն շատերը նոյն են. եւ իրենց ընտանեկան եւ դպրոցական դժուարութիւնները նոյնատեսակ են: Անոնք ըսկսան ըմբռնել թէ կրնան իրարու կարեկցիլ եւ օգնել իրենց դժուարութիւնները լուծելու մէջ, որպէս զի աւելի փայլուն ապագայ մը կարենան ապահովել:

Ուսանողները նոր խաղեր խաղացին, նոր երգեր երգեցին, նոր պատմութիւններ լսեցին, նոր սովորութիւններ կազմեցին, նոր գաղափարներ եւ գաղափարականներ ընդունեցին, նոր հոգեւոր տեսիլքներու թափանցեցին, նոր բարեկամութիւններ շինեցին: Կարծեմ ասոնք են շահերէն սմանք, զորոնք դրպրօցականները պիտի օգտագործեն Յանդուզն Ձեռնարկին պատրաստուելու համար:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՄՐՑՈՒՄ

Պէյրուծի մէջ, Ապրիլ 28ին, միջապրոցային մրցում մը տեղի ունեցաւ 90 ուսանողներու մասնակցութեամբ: Հալէպի Մանչերու Ռարձրագոյն Վարժարանը հինգ ներկայացուցիչներ զրկած էր երկու ուսուցիչներու առաջնորդութեամբ, Յ. Գալաեան, Յ. Մաթոսեան, Ճ. Միսիրեան, Մ. Տ. Գրիգորեան: Ուրախութեամբ կ'իմանանք որ Պրն. Յ. Մաթոսեան յաջողած է 100 մէթր արշաւի մէջ առաջնութիւնը չահիլ, 11. 4 երկվայրկեանի մէջ կատարելով նոյն արշաւը, և այսպէս կոտրած է Պէյրուծի Ամերիկեան համալսարանի 1922 էն իվեր հաստատ պահած նիշը, որ էր 11.9 երկվայրկեան: Իսկ Պր. Ճ. Միսիրեան երկրորդ հանդիսացած է չուանէ ցատկելու մէջ, առաջնութիւնը չահողը ցատկած է 1.53 և Միսիրեան 1.52 մեթր բարձրութեանէն:

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՄԱՀԷՆ ԿԵԱՆՔ

Հնդկաստանի Դամպրա հովիտը շատ բերրի և գեղեցիկատեսիլ է: Ասոր պատճառը այն գարմանալի աղբիւրն է որ կը հոսի բլուրի մը կողէն, և ամբողջ հովիտը կ'ոռոգէ ու հոն բնակող մարդոց պէտքերուն համար ջուր կը հալթայթէ:

Կ'ըսուի թէ անգամ մը այս հովիտը առանց ջուրի էր և ամէն կողմ աւեր կը տիրէր: Բոլոր բոյսերը և ծառերը կը թառամէին ու մարդիկ ծարաւէ կը մեռնէին: Այս տեղին իշխանուհին իր հպատակներուն տառապանքներովը կը չարչարուէր. հետեւաբար դնաց պատգամախօսէ մը խորհուրդ հարցնելու թէ ի՞նչպէս կարելի էր այս երաշտութիւնէն ազատիլ: Պատգամախօսը ըսաւ որ եթէ իշխանուհին մարդոց համար մեռնի առատ ջուր պիտի գայ: Ան պատրաստ էր մեռնելու. իր գերեզմանը պատրաստել տուաւ և մէջը կենդանի թաղուեցաւ: Յետոյ իր գերեզմանէն գետակ մը հոսեցաւ դէպի հովիտը արտերը և պարտէզները, վերակենդանացնելով և ծարաւատանջ ժողովուրդին դռներուն խմելիք ջուր զրկելով: Անկից ի վեր գետերը շարունակ հոսած են այս գարմանալի աղբիւրէն բոլորին տանելով իրենց նախկին օրհնութիւնները:

Այս հին հեթանոսական առասպելը Յիսուսի ըրածը գեղեցիկ կերպով կը լուսարանէ: Աշխարհը կը տառապէր կենաց ջուրի պակասութենէն: Յիսուս մեռաւ և թաղուեցաւ, բայց իր խաչափայտէն ու շիրմէն կենաց ջուրի գետեր հոսեցան աշխարհիս ծառաւը յագեցնելու: Այս գետերը ամէն կողմ կը վազեն. ուր որ կը հոսին անապատը վարդաստանի կը փոխեն. ուր որ երթան հոն գեղեցկութիւն կը տանին: Աշխարհիս բոլոր ուրախութիւնը մեր յարութիւն առած Տէրոջը շիրմէն կուգայ:

(Թարգ.) Ա. Ս. ՊԱՐՈՒԹՃԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

ԿԻՐ. Ազդու Մնայուն կեանք. Մտք. 6.1-7:

Ի՞նչ վարձատրութիւն կ'ակնկալես հանդերձեալին մէջ: Ասիկա կախում ունի անկէ թէ ինչպէս կը զործածես Աստուծոյ պարգեւները այս կեանքի մէջ: Ի՞նչպէս կ'ապրիս քու հոգեկան աշխարհիդ մէջ, բարեկամներուդ հետ: Նիւթական բարիքները զործածելու մասին. անձնասէր մարդը հոս կը հասնի իր նպատակին իսկ բարերարը կ'սկսի Տէրոջը շնորհքին մասնակցելու:

Աղօթք. Տէր, քու գահդ հաստատէ իմ ներսիդիս: Հպարտութիւնը, ագահութիւնը պղծութիւնը և ծուլութիւնը իմ վրաս թող չ'իշխեն: Օգնէ ինձ որ ամեն մեղքի յաղթեմ: Ո՛վ խաղաղութեան իշխան, ևս քեզմէ ուրիշ թագաւոր չունիմ: Դուն իշխէ իմ վրաս: Անուանդ համար: Ամէն:

ԲՇ. Մեր յոյսը Աստուծոյն և. Սաղ. 62:

Կեանքը փորձութիւններով և թշնամիներով չըլապատուած է: Մեր օգնութեան յոյսը Աստուծոյն է: Կեանքը պարտականութիւններով և ակնկալութիւններով լեցուն է: Անոնց կատարելագործման համար մեր վստահութիւնը Տէրոջմէն է. «Յիրաւի իմ վէմն ու փրկութիւնս Ան է, իմ ապաւէնս է, պիտի չսասանիմ»:

Աղօթք. Ո՛վ Հոգի Աստուածային, կեանքի ամեն պարագաներուն մէջ սրտիս զուրը կը բաղխես, օգնէ ինձ որ քու ծայնիդ պատասխանեմ: Թող տուր որ կուրութեամբ քալեմ: Կ'ուզեմ կամովին և սիրով քեզի հետեւիլ: Ամեն ինչ քեզմէ կ'ընդունիմ, ուրախութիւն կամ տրտմութիւն: Սիրոյդ համար: Ամեն:

ԳՇ. Տեղըր Ողորմութիւնը. Սաղ. 130. 1-14:

Աստուած մեր սիրտերուն մէջ շատ բարձր փափաքներ դրած է, մեզ իրեն առաջնորդելու համար: Եթէ մենք մեր ներքին ձայնին մտիկ ընենք Անիկա մեզ գէպի բարին, գէպի գեղեցիկը եւ կատարելալը պիտի տանի: Նիւթապաշտ ենք, քանզի մեր ներքին զգացումներուն չենք հնազանդիր:

Աղոթք. Յաւիտենական էակ, ողորմութեամբդ ուսուցիր թէ ո՞րոնք են մաքուր փափաքները, երկնային ձայնը, մարդուն արժանի խորհուրդները: Օգնէ մեզի, որ խորհինք, խօսինք եւ գործենք այն բաները որ բարի են եւ հաճելի Քու աշացդ: Յիսուսի ամենօրհնեալ անունովը կը խնդրենք: Ամէն:

Դշ... Տեղորդ ապաստել. Սա. 130. 1-7:

Կեանքը անորոշ է: Անոր ճամբաները մէզով պատած է: Տէրը յարմար տեսած չէ ամէն ինչ կանխաւ մեզի յայտնելու: Մեզ քայլ առ քայլ կ'առաջնորդէ: Կ'ուզէ որ ամեն օր եւ ամէն պարագայի տակ մեր աչքերը գէպի երկինք վերցնենք, Անոր ետեւէն քալենք: Ի՞նչպէս կը համարձակիս առանց Անոր կամքը գիտնալու յառաջանալ: Անոր սպասէ: Անոր ձայնին մտիկ ըրէ:

Աղոթք. Ո՞վ Տէր, ես չեմ գիտեր ի՞նչ պէտք է խնդրեմ Քեզմէ: Միայն Դուն գիտես թէ ես ի՞նչ բանի պէտք ունիմ: Ես զինքս ալ ճշմարտապէս սիրել չեմ գիտեր: Ո՞վ Հայր, Քու կամքիդ համեմատ շնորհէ Քու զաւկիդ այն բանը որ ինքը խնդրել չի գիտեր: Իմ սիրտս Քու առջեւ կը բանամ, ողորմէ ինձ, Ամէն:

Եշ. Դաւաթիմ եկեսի կողմը: Մատթ. 23: 23-28:

Կեղծաւոր. կրօնաւոր առաջնորդները մասնաւոր կերպով զգուշիկ էին Յիսուսի: Այս մարդիկ կրօնական ձեւերով կը բաւականանային, եւ անոնց միտքերը հոգեւոր կեանքի իրականութեանց գէմ գոցուած էին: Պէտք էր որ ունենային կենսական Քրիստոնէական փորձառութիւն, որուն պտուղն է խոնարհութիւն, հեղուցիւն եւ անկեղծ բարեկամութիւն: Աղօթենք որ այս հոգին ունենանք:

Աղոթք. Միշտ օրհնեալ Տէր, փրկէ մեզ անօգուտ վախերէ եւ վիշտ ու նեղութիւններէ: Օգնէ մեզի ուրախութեամբ կատարել մեր պարտականութիւնները: Առաջնորդէ մեզ իաղազութեամբ: Ամօթ եւ ծանծաղ կեանքէ մեզ ազատէ: Սիրոյ եւ համբերութեան դասը սորվեցուր մեզի: Փրկչին անունովը: Ամէն:

Ուր. Մեկն Անոր ժողովուրդն են: Սաղ. 100:

Ի՞նչ մեծ փառք եւ արտօնութիւն: Անոր զոհերէն համարձակութեամբ ներս կը մտնենք, արօտներուն մէջ կը պառկինք: Արքայական Սեղանէն կը կերակրուինք: Մեր գատը իրենն է, մեր վիճակով կը հետաքրքրուի, մեզմով կ'ուրախանայ, մեզ իրեն ալ քայական հարստութիւնը կը նկատէ: Դուն այս բաներուն վրայ երբէք խորհեցա՞ր:

Աղոթք. Երկնաւոր Հայր, Դուն ես աղբիւր իմաստութեան, խոհմութեան եւ ճշմարիտ ոյժի, ուսուցիր զու ինձ թէ ի՞նչպէս պէտք է տանիմ իմ հոգեւրս, ցաւերս, ի՞նչպէս պէտք է դիմաւորեմ փորձութիւններ: Զօրացուր զիս, բռնէ իմ աջ ձեռքէս, առաջնորդէ զիս. Քու կամքիդ համեմատ: Ամէն:

Շքք. Մաքուր կեանք մը: Մտք. 5, 8, Սաղ. 24, 3-6:

Եթէ սրտի մէջ եղած ամէն ինչ մաքուր ըլլայ, արտաքին կեանքի մէջ ամէն բան մաքուր կըլլայ: Եթէ նկարագիրը մաքուր ըլլայ, նաեւ վարմունքը մաքուր կըլլայ: Եթէ սիրտը մաքուր է, ձեռքերն ալ մաքուր կըլլան: Ներքին մարդը եւ խորհուրդները արտաքինին գոյնը, բնութիւնը եւ վիճակը կ'որոշեն:

Աղոթք. Ո՞վ Տէր, խոնարհեցուր մեր սրտերը, որպէսզի մեր մարմիններն ալ առողջ եւ զօրաւոր ըլլան: Դուն զսպէ մեր փափաքները, բնազդները եւ վարք ու բարքը: Օգնէ մեզի որ ուղղամիտ եւ ճշմարտախօս ըլլանք, խորհուրդով եւ գործով, փառքիդ համար: Ամէն:

ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՃԸ

ՄԱԿԱՐԱՅԵՑԻ ՅՈՒԴԱՅԻ ՔԱՋ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ն. Ք. 180 թուականին Հրեաները Բաբելոնի գերութենէն շատոնց դարձած՝ եւ իրենց տաճարն ու Երուսաղէմի քաղաքը վերանորոգած էին. սակայն կատարելապէս անկախ չէին. իրենց երկիրը աւելի մեծատէրութեան մը կը պատկանէր, օտար թագաւոր մը կ'շխէր իրենց եւ իրենք այդ թագաւորին հարկ կը վճարէին:

Մեր պատմիչը գէպքին ժամանակ, այդ օտար թագաւորին անունն էր Անտիոքոս Եպիփանէս, թագաւոր Սուրիոյ: Երբ Մեծն Աղեքսանդր մեռաւ՝ իր ահապին ընդարձակ հողերը ժառանգութիւն ինկան իր քաջ զօրավարներուն՝ որոնցմէ միոյն բաժինն էր Միջերկրական ծովէն մինչեւ Հնդկաստան. ահաւասիկ այս ինքնակալին սերունդէն. յառաջ եկած էր Անտիոքոս Եպիփանէս: Այս թագաւորը Յունարէն կը խօսէր, եւ կը պաշ-

տէր թէ՛ Յունաց և թէ՛ Հռովմայեցւոց շատ մը աստուածները. և չէր հանդուրժեր որ Հըրեաները իրենց մէկ Աստուածը պաշտէին, այլ կը փափաքէր որ անոնք ալ Յոյներուն և Սուրիացիներուն պաշտած աստուածները պաշտեն, և ի պատիւ անոնց տեղի ունեցող ապականած արարողութիւններուն և խնճոյքներուն մասնակից ըլլան: Նոյն իսկ կը հալածէր զանոնք այս նպատակաւ: Յաւալի է որ Հրեաներէն շատերը, այդ հալածանքներուն չդիմանալով իրենց հին կրօնքը ձգեցին,

ու յարեցան թաղաւորին նոր կրօնքին ու նոր զեղխութիւններուն ու ապականութիւններուն, իրենք ալ Յոյներուն նման մերկամարմին կը խաղային թատրոններուն մէջ, Բագոս աստուծոյն որթատունկեր կը նուիրէին, և կուսքերուն խունկ կը ծխէին:


Հրէից քահանայապետը Մէնէլօս, թագաւորը տաճարը տարաւ, զայն Սրբութեան Սրբոցը մտցուց, ու անոր ցոյց տուաւ տաճարին ոսկիէ ու արծաթէ անօթները:

(Շարունակելի)


ՁԱՓԱԽՈՐ

ԻՄ ԾԱՂԻԿՍ

ԹԱՐԳՄ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ



Ծաղիկ մը ես առի ընծայ, ու տըն՝ կեցի զայն որ մեծնայ



Ջուր ալ տըն լի ես ա նոր, խընամք տա ըր նո րա նոր:

Ծաղիկ մը ես առի ընծայ,
Ու տնկեցի զայն որ մեծնայ.
Ջուր ալ տուի ես անոր,
Խնամք տարի նորանոր:
Կեա՛նք տուր, արեւ, ծաղկիս և ուժ,
Ամպեր զուք ալ ջուր ու աշխոյժ.
Ծաղիկ քաջ լեր, անվեհեր,
Եւ չտկէ քո տերեւներ:

Պէտք է ես միշտ երթամ պարտէզ,
Ծաղիկս տեսնել ցանկամ սրտէս.
Թէ նեղացար անուշիկ,
Ո՛հ ըսէ ինձ այն յուշիկ:
Երկնից արեւ քանի չողայ,
Սրտի խորէն ծաղիկս ցնծայ.
Թիթեռն նախշուն տես վերեւ,
Էրեւն կ'ուտայ վիհ բարեւ:

Ա. Ճ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պեկեկոսկի Ոյժը

Վեր. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Բրիսոսն և Գեղարուեստը

Տ. Ճ. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկչաբաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խրլոբեան ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ
Արտասահման » » 1 Տոլար
Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE